
**ԿԱՆՈՆԻ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն. Հ.

Լեզվական կանոն (լատ. *norma*-ղեկավար սկզբունք, կանոն, օրինակ) է կոչվում տվյալ լեզվի կանոնների ամբողջությունը, որը պարտադիր է այդ լեզվով խոսող ամբողջ հանրության համար, հանրայնորեն գիտակցվում է իբրև ճիշտ ու ընդունելի տվյալ որոշակի ժամանակահատվածում: Լեզվական կանոնները վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ անխտիր (հնչյունական, բառական, ձևաբանական, շարահյուսական) և լեզվական բոլոր երևույթներին:

Լեզվական կանոնը պատմական կատեգորիա է: Այն մեկընդմիջ տրբված իրողություն չէ և կարող է մշակվել ու փոփոխվել ժամանակի ընթացքում: Լեզվի կանոնակարգումը գիտակցված միջամտություն է, որով կանոնավորվում է անհատների լեզվագործածությունը՝ այնպիսի սկզբունքներով, որոնց հիմքում ընկած են արդյունավետությունը, գիտականությունը և տրամաբանությունը, լեզվական միջոցների խնայողությունը, պարզությունը, մատչելիությունն ու հասկանալիությունը¹: «Լեզվի կանոնարկումը գիտական-կազմակերպական գործառնություն է, գործունեություն, որով սահմանվում է լեզվական իրականությունների ճիշտ ու միասնական կիրառություն: Կանոնարկումն ունի երկակի խոշոր դեր. այն ա) կարգավորում է հասարակության անդամների ճիշտ ու միասնական հաղորդակցումը՝ գրական լեզվով, բ) նպաստում է լեզվի հետագա կատարելագործմանը, միասնականացմանը, զարգացմանը»²:

Լեզվական կանոնների մեջ փոփոխություն կարող է կատարվել 2 ճանապարհով. 1. Գրականության միջոցով: Գրական լեզուն գրողների, գիտնականների շնորհիվ մշակվում է, կանոնավորվում, միօրինակացվում: 2. Լեզվաբանների, մասնագետների միջամտությամբ: Այս տարբերակը համարվում է արհեստական միջամտության ուղի: Մասնագետները, նշելով ժողովրդի լեզվական զգացողությանը խորթ, լեզվի տվյալ փուլի համար արդեն հնացած ու չգործածվող իրողությունները, մշակում են համապատասխան կանոններ և ենթականոններ, լեզվի գործող կանոններում կատարում են որոշակի փոփոխություններ՝ դրանց տալով պարտադրականության ուժ: Օրինակ, 1940 թ. օգոստոսի 15-ին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հաստատեց Տերմինաբանական կոմիտեի ներկայացրած նախագիծը՝ 1922 թ. հաստատված արեղյանական ուղղագրությունը մասնա-

¹ Տե՛ս Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք I, Ե., 1990, էջ 68:

² Աբրահամյան Ս., Հայոց լեզվի կանոնարկման համակարգի ու ելակետային սկզբունքների մասին (Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, պրակ 3, Ե., 1988, էջ 5):

կիրքն բարեփոխելու մասին: Ըստ այս նախագծի՝ հայերենի ուղղագրական կանոնների մեջ կատարվեցին 7 կետից բաղկացած փոփոխություններ, այդ թվում՝ վերականգնվեցին և այբուբեն վերադարձվեցին հայոց այբուբենից վտարված «է» և «օ» տառերը: Սա ժամանակի պահանջով արհեստական միջամտությամբ արված փոփոխություն էր, որն անհրաժեշտ էր և տեղին:

Նշենք, որ նորանկախ Հայաստանի Հանրապետության գոյության տասնհինգամյա պատմության մեջ Լեզվի պետական տեսչությունը և հատկապես վերջինիս կազմում գործող Լեզվի բարձրագույն խորհուրդը բազմաթիվ հրամաններով և ենթաօրենքներով ճշտել ու ճշգրտել են բազմաթիվ բառերի իմաստներն ու դրանց ճիշտ գրությունը, մշակել օտար բառերի տառադարձության, շեշտադրության և արտասանության համապատասխան կանոններ, օրեցօր զարգացող գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների, նոր երևույթների համար ստեղծել բազմաթիվ հայերեն բառեր, հիմնականում տերմիններ՝ հայոց լեզուն օտարաբանություններից հնարավորինս զերծ պահելու համար: Այդ ընթացքում մերժվել են բազում անհարկի փոխառություններ և օտարաբան կառույցներ: Այսպես՝ *ատենախոսություն, արժույթ, ասուլիս, ամբիոն, ձայներիզ, ձայնասկավառակ, խաղատուն, գիտաժողով, գովազդ, ընդդիմախոս, սրճարան, խորհրդարան, ընտրատարածք, ընտրազանգված, գրավատուն, պատգամավոր, մատուցող, ջահ, ծրագրավորում, հռչակագիր, ռազմավարություն, վարձակալություն, լրատվամիջոց, կրթահամալիր, ճեպագրույց, շնորհանդես, վարկանիշ* և բազմաթիվ այլ հայերեն բառեր, որոնց մեծամասնությունն այսօր դեռևս ամփոփված չեն բառարաններում՝ մեր լեզվից դուրս են մղել դրանց համանշանակ օտարաբանությունները, որոնք ընդամենը 15-20 տարի առաջ շատ ավելի կիրառական ու գործածական էին հայերենում: Սա ևս արհեստական, բայց գիտակցված և անհրաժեշտ միջամտություն է: Իսկ դրա անհրաժեշտությունը հիմնականում ծագում է կիրարկության պահանջով:

Կիրարկություն է կոչվում լեզվի կանոնական մակարդակի մասնավոր, անհատական կիրառությունը, լեզվի կանոնների իրացումը խոսքում: Կիրարկության էությունն այն է, որ այս մակարդակում լեզուն ստանում է ֆիզիկական, նյութական դրսևորում, լեզվի կառուցվածքային և կանոնական մակարդակի օրենքները ստանում են իրական, կոնկրետ, անհատական դրսևորում: «Խոսքը լեզվի ներգործուն վերարտադրությունն է, այսինքն՝ խոսելու ժամանակ մարդը ոչ միայն վերարտադրում է այն, ինչ որ երբևէ լսել կամ կարդացել է..., այլև լեզվի կանոնական համակարգի գործադրումով ստեղծում է այնպիսի բառեր, բառակապակցություններ, իմաստային երանգավորումներ և այլն, որոնք երբեք չի լսել»³: Անգամ ինչ-ինչ սխալ բառեր, կապակցություններ, լեզվական կանոնական մակարդակի կողմից չխրախուսվող ձևեր, շատ կիրառվելով խոսքում, ժամանակի ընթացքում դառնալով հանրության սեփականությունը, նախապայման են դառնում կանոնական մակարդակ մտնելու համար: Այսինքն՝ շատ դեպքերում հենց կիրարկությունն է, որ թելադրում է ճշգրտումներ մտցնել լեզվական կանոնների

³ Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 13:

համակարգում: Այսպես, օրինակ՝ դարասկզբում հայերենի բայի խոնարհման համակարգի հրամայական ձևերի կազմությունը խիստ տարբերվում է ներկա կազմությունից: Դեռ ավելին, նկատելի է միտում **-Ե** խոնարհման բայերի հարացույցում հրամայական ձևերի կազմության ժամանակ եզակի թվի ձևերի առանց վերջնահնչյուն «*ր*»-ի կիրարկության, այսինքն՝ *գրի՛ր, որոշի՛ր, մտածի՛ր* ձևերի փոխարեն՝ *գրի՛, որոշի՛, մտածի՛* ձևերը: Նույն միտումը նկատելի է նաև **-Ա** խոնարհման բայերի սոսկածանցավոր ձևերի կազմության ժամանակ, օրինակ՝ *մոտեցի՛, բարձրացի՛, փոխանակ՛ մոտեցի՛ր, բարձրացի՛ր*: Այս սխալ կիրարկությունն այսօր այնքան է տարածված, որ ըստ էության, ոչ մասնագետների կողմից չի էլ գիտակցվում դրանց սխալ լինելը:

Մեկ այլ դիտարկում ևս. XX դ. կեսերին նկատելի է, որ **-Ե** խոնարհման աններածանց կամ պարզ բայերի հրամայական եղանակի հոգնակի թվի համար ճիշտ և խրախուսելի էր համարվում ցոյական կազմության ձևը՝ *պատկեցե՛ք, սիրեցե՛ք, որոշեցե՛ք* և այլն, իսկ լեզվի զարգացման ներկա փուլում միտում կա ավելի կարճ ձևերի կիրառության, այն է՝ *պատկե՛ք, սիրե՛ք, որոշե՛ք* և այլն: Այսինքն՝ լեզուն գործադրում է նվազագույն ճիգի օրենքի սկզբունքը նաև քերականության մեջ: Այսօր արդեն հայոց լեզվի բազմաթիվ դասագրքերում ցոյական ձևերի կողքին՝ որպես ճիշտ տարբերակ, նշվում են նաև դրանց անածանց ձևերը:

Ըստ լեզվաբան Պ. Պողոսյանի՝ լեզվական կանոնը երկու մակարդակ ունի՝ քերականական կամ նախադասության և խոսքի: Քերականական կամ նախադասության մակարդակի կանոնը ամբողջանում է հայերենի ուղղագրության, ուղղախոսության, բառերի, բառաձևերի ճիշտ գործածության, նախադասության կառուցվածքի ճշտության ենթականոններով⁴:

Փորձենք անդրադառնալ մեր լեզվում այսօր հաճախ հանդիպող կանոնի և կիրարկության սխալ կիրառումներին, որոնք հատկապես ակնհայտ են ուղղախոսության, բառերի ճիշտ գործածության և նախադասության կառուցվածքի մակարդակներում:

Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը սահմանում է գրական լեզվի բանավոր խոսքի պատմականորեն ձևավորված արտասանական կանոնների ամբողջությունը: Ժամանակակից հայերենի ուղղախոսական կանոնների ամբողջությունը լեզվի զարգացման տվյալ փուլի համար ընդունված միակ ճիշտ, նախընտրելի արտասանական տարբերակն է՝ ի տարբերություն բանավոր խոսքում գործող բարբառային և օտար արտասանությունների: Մակայն այսօր, դժբախտաբար, ամեն պահի աղավաղվում, աղճատվում և խաթարվում են հայերենի ուղղախոսական կանոնները, ինչն աններելի է հատկապես, երբ խոսքը վերաբերում է բեմից, ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչող խոսքին: Արտասանական սխալները հաղորդակցական գործընթացում բարդություն չեն ներկա-

⁴ Տե՛ս Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 65:

յացնում, քանի որ խոսողի և խոսակցի՝ միևնույն լեզվական հանրությանը պատկանելու շնորհիվ արդեն իսկ ենթատեքստից խոսակցի համար հասկանալի է դառնում, թե աղճատված հնչյունապատկերը ինչ է նշանակում: Ժամանակին բազմիցս գրվել և խոսվել է ռուսաց լեզվի արտասանական առանձնահատկությունների ազդեցությամբ հայերեն բազմաթիվ բառերի քմայնացման մասին: Այստեղ նշենք միայն մի քանի ակնհայտ ուղղախոսական սխալներ. օրինակներ, որոնց սխալ կիրառությունն ամեն օր հեռուստա և ռադիո եթերներից այլևս ականջ չի ծակում, քանզի դարձել է համատարած: Առաջին անգամ չէ, որ լեզվաբանները մատնանշում են «ույթուն» ածանցի վերջին –թ տառի քմայնացման փաստը: Սակայն՝ անօգուտ: Այսօր ևս լեզվագործածողների մեծամասնությունը «ույթուն» ածանցն արտասանում է քմայնացած՝ [շնօրհակալուցուն], [քաղաքականուցուն], [կատարելուցուն], [տեսուցուն] և այլն:

Ռուսերենի ազդեցությամբ տարածված սխալ կիրառություն է նաև դ-տ-թ հնչյուններիի վերածումը ձ-ծ-ց-ի մի շարք բառերում, ինչպես՝ [ակաճեմիա], [ռաժիո], [ձիպլոմ], [ձիանա], [մաժան], [ձյուրին] և այլն: Ռուսաց լեզվի երկարամյա ազդեցությանն այսօր ավելացել է նաև անգլերենի ազդեցությունը հայերենի վրա: Հատկապես անգլերենին հատուկ շեշտադրումներն ու ելնեջումները, նախադասության արտասանության ժամանակ բարձրացողիչնող հնչերանգը բացահայտորեն մուտք են գործում լեզու, հատկապես՝ հեռուստաեթեր, ինչը ամենավտանգավորն է: Հազարավոր ունկնդիրներ ակամա յուրացնում, ընդօրինակում են հեռուստահաղորդավարների սխալ արտասանությունն ու օտար շեշտադրությունը, ուղղախոսական և լեզվական մյուս խախտումները:

Բառերի ճիշտ գործածությունը կախված է բառիմաստի ճիշտ ընկալումից: Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որ ուսումնասիրում է լեզվի բառապաշարն ամբողջությամբ⁵: Բառագիտությունը սահմանում է նաև լեզվի զարգացման տվյալ փուլի համար միակ ճիշտ և խրախուսելի՝ տերմինների կիրարկությունը լեզվում: Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման այս ժամանակահատվածում պետք է կարողանալ ճիշտ կողմնորոշվել և, մի կողմից, լեզուն հնարավորինս զերծ պահել օտարաբանություններից, մյուս կողմից էլ՝ չընկնել ծայրահեղությունների մեջ՝ տառապելով անհարկի մաքրամոլությամբ և ամեն ինչ հայացնելու մարմաջով: Օրինակ՝ վերջին շրջանում մեր կյանք ներխուժած և հաստատուն տեղ գրաված «կոմպյուտեր» բառի համար տարբեր ժամանակներում առաջարկվել են հայերեն համանշանակներ՝ համակարգիչ, հաշվակ, կարգավորիչ և այլն: Սակայն սրանցից ոչ մեկը, ըստ էության, չէր բացահայտում «կոմպյուտեր» բառը՝ իր ողջ իմաստով: Ուստի՝ Տերմինաբանական կոմիտեի կողմից մերժվեցին հայերեն բոլոր «համարժեքները», և միակ ճիշտ ձև համարվեց փոխառյալ «կոմպյուտեր»-ը: Սակայն հետաքրքիր է մարդկային հոգեբանությունը: Այսօր հայաստանյան բազմաթիվ սրահների պատուհաններին կարելի է տեսնել «Համակարգչային կենտրոն», «Համակարգիչներ» և նման այլ

⁵ Տե՛ս **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:

ցուցանակներ: Այսինքն՝ անկախ այն բանից, որ *համակարգիչ* բառը, ըստ էության, նույն *կոմպյուտեր*-ը չէ, և կոմպյուտեր կոչվածը դեռ չի նշանակում ինչ-որ բան համակարգող, այնուամենայնիվ, կիրարկության հզոր ուժով այս բառը մտել է մարդանց լեզվամտածողության մեջ և ամրագրվել:

Բառապաշարն այն միակ ոլորտն է, որն անմիջականորեն է ազդվում երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնիկական, գիտաարտադրական զարգացումներից ու փոփոխություններից: Սակայն հաճախ՝ ոչ դրականորեն: Եվ կանոնի ու կիրարկության «բախումը» առավել ակնհայտ է դառնում հենց այս ոլորտում: Մյուս կողմից, հայաստանյան հեռուստաընկերություններն ամեն օր խախտում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը, որի համաձայն՝ հեռուստաթերթի լեզուն պետք է լինի հայերենը: Խախտելով օրենքը՝ միաժամանակ խախտում են նաև հայոց լեզվի լեզվական կանոնները՝ դիմելով օտարաբանությունների այն դեպքում, երբ շատ ու շատ բառերի հայերեն տարբերակները մեր լեզվում կան: Այսպես, օրինակ՝ միայն այն հաղորդումները, որոնց վերնագրերը հայերեն չեն կամ կազմության մեջ ունեն օտար բաղադրիչ, անցնում են երկու տասնյակից. «Տուտի-ֆրուտի», «Երեկոյան կոկտեյլ», «Ինտերյեր», «Մարկետ շոու», «Պողիում արտ», «Մեկտոր պրո», «Սփոթ-էքստրա», «Քոմեդի քլաբ», «Բլից», «Պողիում», «Շոուբիգ», «Իպսո-ֆակտո», «Իրիկնային ռանդու», «Զագ լայֆ», «Ռեվյու», «Ռետրո ակումբ», «Սինեմանիա», «Հայկական ուիքենդ» և այլն:

Իրավիճակն ավելի մտահոգիչ է դառնում, երբ ուսումնասիրում ենք հայրենական արտադրության գովազդային հոլովակները: Կանոնի և կիրարկության բազմաթիվ սխալ կիրառություններն այստեղ ուղղակի աչք են ծակում: Հեռուստաթերթից գովազդվող իրերի, սննդի և կազմակերպությունների անվանումները մեծ մասամբ օտարալեզու են, ինչը, գուցե, բնական է այն պարագայում, երբ գովազդվող արտադրանքը ներմուծվել է արտերկրից: Բայց ահա օտար բառերով են գրանցվում և գովազդվում հայրենական արտադրության բազմաթիվ ապրանքներ ու կազմակերպություններ ևս, ինչպես, օրինակ՝ «*Grand Candy*», «*Grand Tobacco*», «*Grand Sun*», «*Sweet Land*», «*Star Supermarket*», «*Galaxy*», «*Sil Group*», «*Multi Group*», «*Play City*», «*Bluze*» տաքսի ծառայություն և այլն: Այսօր գովազդվող արտադրանքի մեծ մասի ոչ միայն անվանումներն են օտարառանց, այլև շատ հաճախ՝ նաև տեքստը: Օրինակ՝ «Տդես, որ մեծացավ, դառնալու ա *բիզնեսմեն* ... Երեխեն, որ մեծացավ, դառնալու ա *մարշրուտնու շոֆեր*...», «Վայ, *պրիվետ: Էս ի նչ էս ինձ բերել*...», «Եթե դուք ունեք *ստաբիլ* եկամուտ...» և այլն:

Նախադասության կառուցվածքի ճշտությունն ապահովվում է շարահյուսությունը: Քիչ չէ նաև օտարաբան շարահյուսական կիրառությունների դրսևորումը հայկական ԶԼՄ-ներում, ներառյալ՝ նաև նույն գովազդներում՝ «*Խոսքը գնում է Զիզզագի քարտի մասին*...», «*Ձեր* և *Ձեր* երեխաների *համար*»:

Եվ ինչո՞ւ միայն գովազդի լեզվում: Շարահյուսական սխալ կիրառություններն առկա են բոլոր հեռուստաընկերությունների բոլոր հաղորդումներում՝ «Հանդիպումը տեղի ունեցավ որակապես նոր մակարդակի վրա» (փոխանակ՝ նոր մակարդակով), «Ինձ մոտ այսպիսի հարց ծագեց» (փոխանակ՝ «Ես այսպիսի հարց ունեմ»), «Պրեզիդենտը գնաց վաստակավոր հանգստի» (փոխանակ՝ վաստակած), «Այս փողոցի վրայով անցնում էր տրամվայը» (փոխանակ՝ փողոցով), «Միջադեպի արդյունքում 15 մարդ է զոհվել» (փոխանակ՝ «Միջադեպի հետևանքով...», քանի որ *-արդյունք* նախ և առաջ նշանակում է՝ *բերք, պտուղ, արգասիք*) և այլն:

Այսօրինակ սխալների մասին խոսվել է ու խոսվում է անընդհատ: Սակայն մայրենի լեզվի նկատմամբ մեր հոգատարությունը դեռևս աննկատ է: Արժե հատկապես շեշտել դերանունների սխալ կիրառության փաստը, ինչն այսօր համընդհանուր է դարձել: Ռուսաց լեզվի ազդեցությամբ տարածված սխալներ են «Ինչպե՞ս է Ձեր անունը», «Ինչպե՞ս եք մտածում» արտահայտությունները, որ հայերեն չեն:

Մեր օրերում, երբ երիտասարդության տեղեկատվական հիմնական պահանջ-մունքները բավարարում են հեռուստատեսությունն ու ինտերնետը, երբ պատանիները դպրոցից ավելի շատ կրթվում են հեռուստաթերթի լեզվով և օրինակում սիրված հաղորդավարների ոճերը, ցավոք, պիտի նշել, որ այդ, այսպես կոչված, «կրթական գործընթացը» իրականում խարխլում է ազգային լեզվամտածողության հիմքերը, հայերենը դարձնում անգլիառուսախառը լեզու: Դրանից ձերբազատվելը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի դժվար է դառնալու: Փաստորեն, ամեն օր բազմիցս ականատես ենք լինում հայոց լեզվի կանոնի ու կիրարկության խախտման, իսկ դրա դեմ պայքարող ակնհայտ ուժ, ըստ էության, չկա:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НОРМЫ И УЗУСА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ВАРДАНИЯН Н. Г.

Резюме

Лингвистической нормой называется целостность правил данного языка, обязательная для всего сообщества, говорящего на этом языке.

Узусом называется частное индивидуальное использование канонического уровня языка, реализация норм языка в речи.

На сегодняшний день наш язык изобилует примерами ошибочного использования нормы и узуса, в частности, на уровне орфоэпии, правильного употребления слов и составления структуры предложения.